«Ընկերության միջազգային օր» գովազդային վիճակախաղի մասնակցության պայմաններ

1. Ներածություն

1.1 «Ընկերության միջազգային օր» գովազդային վիճակախաղի (այսուհետ՝ Գովազդային վիճակախաղ) կազմակերպիչն է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ):

1.2 Մասնակցելով Գովազդային վիճակախաղին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն պայմանները (այսուհետ՝ Պայմաններ:

1.3 Սույն Պայմաններին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Իրականացվող Գովազդային վիճակախաղի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է Կազմակերպչի պաշտոնական Ինստագրամյան էջում՝ հրապարակման միջոցով:

2.2 Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Պայմանների 2.1 կետում նշված հարթակում:

2.3 Գովազդային վիճակախաղին մասնակցության համար որևէ վճար չի գանձվում:

2.4 Կազմակերպիչն իրավունք ունի կապ հաստատել հաղթող մասնակցի հետ և ստուգել նրա իսկությունը: Եթե մասնակիցը չի պատասխանում, հրաժարվում է ներկայանալ կամ նրա պատասխանների մեջ կա տվյալների անհամապատասխանություն, ապա նրա մասնակցությունը կարող է չեղյալ համարվել:

2.5 Մասնակցի մասնակցությունը կարող է չեղյալ համարվել նաև այն դեպքում, երբ Գովազդային վիճակախաղի ամփոփման ժամանակ՝ 2026 թ. Օգոստոսի 17-ին մասնակիցը կատարած չլինի Պայմանների 3.1 կետում նշված պայմաններից որևէ մեկը:

2.6 Գովազդային վիճակախաղին կարող են մասնակցել միայն իրական անձնական էջերը՝ անուն, ազգանուն և լուսանկարով: Կեղծ տվյալներով կամ բիզնես էջերի մասնակցությունը կչեղարկվի:

3. Մասնակցության պայմաններ

3.1 Գովազդային վիճակախաղին մասնակցության հնարավորություն կտրվի 2026թ. Հուլիսի 30-ից մինչև 2026թ. օգոստոսի 16-ը ներառյալ հետևյալ պայմանները կատարած մասնակիցներին.

- Հետևել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Տելեգրամի պաշտոնական ալիքին (այսուհետ՝ Տելեգրամ ալիք)՝ ծանոթանալով Ակբա բանկի կողմից մատուցվող ծառայություններին՝ www.acba.am պաշտոնական կայքում,
- Հետևել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Ինստագրամի պաշտոնական էջին (այսուհետ՝ Ինստագրամի էջ)՝ ծանոթանալով Ակբա բանկի կողմից մատուցվող ծառայություններին՝ www.acba.am պաշտոնական կայքում,
- Ինստագրամի էջում նշված հրապարակման մեկնաբանություններում նշել որևէ ընկերոջ:
- Կիսվել հրապարակմամբ իրենց սթորի բաժնում:

3.2 Պատահականության սկզբունքով կընտրվի երկու հաղթող մասնակից (այսուհետ՝ Հաղթող), որոնցից յուրաքանչյուրին կտրամադրվի նվեր քարտ, Dilijan Inn հյուրանոցում երկօրյա հանգիստ անցկացնելու համար (այսուհետ՝ Պարգևատրում):

3.3 Պարգևատրումը ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի հետ:

3.4 Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում տրամադրված Պարգևատրման որակի համար:

3.5 Գովազդային վիճակախաղի հաղթողը կորոշվի պատահականության սկզբունքով՝ առցանց ծրագրի միջոցով՝ ըստ Կազմակերպչի հայեցողության:

3.6 Գովազդային վիճակախաղի արդյունքների ամփոփումը տեղի կունենա 2026թ. Օգոստոսի 17-ին Ինստագրամյան էջի Գովազդային վիճակախաղի մասին հրապարակման Սթորի բաժնում՝ էկրանի տեսագրության միջոցով:

3.7 Վիճակախաղի ընթացքում յուրաքանչյուր մասնակից՝ անկախ իր մեկնաբանությունների քանակից, կարող է շահել միայն մեկ Պարգևատրում:

3.8 Պարգևատրումը Կազմակերպչի կողմից Հաղթողին կարող է տրամադրվել մինչև 2026թ.-ի Սեպտեմբերի 10-ը (ներառյալ): Մինչև նշված ժամկետի ավարտը Պարգևատրումը ստանալու պահանջով Կազմակերպչին չդիմելու դեպքում Պարգևատրումը կչեղարկվի:

3.9 Կազմակերպչի, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ, «ԱԿԲԱ-ԱՄՈՒՆԴԻ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ ԵՎ «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ աշխատակիցները չեն կարող հանդիսանալ Պայմանների 3.1 կետում նշված Վիճակախաղի հաղթող և չեն կարող ստանալ Պարգևատրումը այլ մասնակցի կողմից Գովազդային վիճակախաղում հաղթելու դեպքում:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել www.acba.am կայք կամ զանգահարել 010-31-88-88 հեռախոսահամարով: